Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները հայոց պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող մենթոր՝ Փիրուզա Սարգսյան

Ուսուցիչ՝ Անի Տոնոյան

Վաղարշապատ 2023

Բովանդակություն

Ներածություն……..3
Թեմա 1. Գնահատում, գնահատման հիմնական գործառույթները……4
Թեմա 2. Գնահատման եղանակները, ձևերը և ստուգման տեսակները……6
Թեմա 3. Ընթացիկ գնահատում……....8
Թեմա 4. Գնահատման գործիքները հայոց պատմություն……..12
առարկայի դասավանդման շրջանակներում
Եզրակացություն……...23
Գրականության ցանկ……...24
Հավելված……25

Ներածություն

Ամենամեծ գովեստն ուսուցչի համար այն է,

երբ գովում են իր աշակերտին:

Շառլոտ Բրոնտե

Թեմայի արդիականությունը Կյանքի արագընթաց փոփոխությունների, տեղեկատվության ծավալի բազմապատկման, կրթության նկատմամբ հասարակության պահանջկոտության մեծացման պայմաններում, մարդկությանը միշտ էլ հուզել են կրթության ու դաստիարակության խնդիրները:

Կրթության որակի բարելավման խնդիրը միշտ արդիական է: Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթակարգով, պետական չափորոշիչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանը:

Այդ խնդիրների լուծման ժամանակակից մոտեցումներում առանցքային դեր է վերագրվում հանրակրթությունում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգերին:

Այս համատեքստում կարևոր է ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը և այն ներդնելը, քանի որ ուսումնական ողջ գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմամբ:

Առավել արդիական է դառնում գնահատումն օգտագործել ոչ միայն որպես ուսուցման արդյունքների ստուգման այլ նաև որպես ուսուցումը բարելավելու միջոց: Հետևաբար, սույն հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ուսումնառությանը նպաստող գնահատման կանոնակարգված ներդրումը գնահատման մյուս ձևերին զուգընթաց կնպաստի դպրոցներում դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գնահատման տեսակները և գործիքները, բացահայտել դրանց կիրառման արդիականությունը և արդյունավետությունը հայոց պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում:

Հետազոտության հիմնական խնդիրներն են.

1. Հետազոտական աշխատանքի թեմայի վերաբերյալ եղած մեթոդական գրականության ուսումնասիրում:
2. Ուսումնասիրել ներկայումս ՀՀ հանրակրթական դպրոցներում գործող գնահատման համակարգն ու դրա արդյունավետությունը:

3. Համեմատել և համադրել միավորային և ուսուցանող գնահատման ձևերը, ընդգծել դրանց առանձնահատկությունները հայոց պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում:

Ուսումնասիրվող թեմայի գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնական գործընթացում ուսումնառությանը նպաստող գնահատման ձևերը հնարավորություն կտան ուսուցչին բացահայտելու յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, խոչընդոտները, բացթողումները, որոնք վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ կմտցնի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս թեմայից, եզրակացությունից և գրականության ցանկից

Թեմա 1.
Գնահատում, գնահատման հիմնական գործառույթները

Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատմամբ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը:

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը: «Գնահատում » բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Գնահատում տերմինը մինչ այժմ մանկավարժության մեջ հիմնականում օգտագործվել է չափման իմաստով, չեն տարբերակել «գնահատում» ու «գնահատական տալ» արտահայտությունների իմաստները: «Գնահատումը» դա շարունակակն գործընթաց է: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

Գնահատման համակարգը պետք ներառի միջոցներ, որոնք կգնահատեն

- Գիտելիքներ
- Հմտություններ
- Դիրքորոշում
- Արժեքներ

Ուսումնական գործընթացում գնահատումը նշանակում է նաև քանակական և որակական տվյալների նպատակային գրառում: Ուստի դա ավելի լայն ընդգրկում

ունի, քան չափումը: Ուսուցիչների համար գնահատման նպատակը սովորաբար աշակերտների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է, ինչպես օրինակ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է աշակերտների դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում: Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո, ելնելով սովորողների արդեն ձեռք բերած գիտելիքներից, նա ընտրում է ուսուցումը շարունակելու հետագիծը:

Նոր մոտեցումներով ուսուցչի համար գնահատումը, ոչ միայ սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, տարբերակի ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը չպետք է վերաբերի նրա անձին, այլ կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին և ամենակարևորը՝ առաջադիմության որակի բարձրացմանը:

Ծնողի համար գնահատումը պետք է լինի երեխայի առաջընթացն արձանագրելու, ավելի ճիշտ ուսուցումը կազմակերպելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար գնահատումը (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու միջոց լինի:

Սովորողների գնահատման նոր համակարգի մշակումը և կիրառությունը պետք է կատարվի առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրմանը զուգահեռ:

Գնահատման ներդրվող համակարգը պիտի հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության, թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգայնորեն ընդունված գնահատման չափանիշներին:

1.Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:

2.Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը:

3.Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը:

4.Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:

5.Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:

6.Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:
7.Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:
8.Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:
9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը:
10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը բացահայտում է նաև ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, որոշակի առարկայի յուրացման մակարդակի առանձին ուսումնական հաստատություններում, մարզում, ինչպես նաև՝ հանրապետության ողջ տարածքում:

Սակայն ներկայումս գործող գնահատման համակարգը ունի վերափոխման կարիք, որի անհրաժեշտությունը պայմանավորված է որոշակի հիմնախնդիրների առկայությամբ: Դրանք են.

ա) գործող գնահատման համակարգը հիմնականում բացահայտում է սովորողի ստացած տեղեկությունների ու փաստերի մտապահման աստիճանը և չի նպաստում նրա ճանաչողական-կիրառական կարողությունների ու հմտությունների զարգացմանը. բ) գնահատման գործընթացը թափանցիկ չէ և ամբողջովին չի բացահայտում ուսուցման արդյունքները, չի արտացոլում յուրաքանչյուր սովորողի և դպրոցի առաջընթացի իրական պատկերը. գ) դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեությունը գնահատելիս հաշվի չեն առնվում տվյալ դպրոցի առանձնահատկություններն ու հնարավորությունները, սահմանված չեն դպրոցների գնահատման միջինացված միասնական չափանիշներ:

Հետևաբար առարկայական նոր չափորոշիչների ներդրմամբ վերափոխվող գնահատման նոր ներդրվող համակարգը կլուծի վերը նշված խնդիրները:

Թեմա 2 .

Գնահատման եղանակները, ձևերը և ստուգման տեսակները

ՀՀ հանրակրթության մասին օրենքում ասվում է, որ գնահատումը կատարվում է հանրակրթության պետական չափորոշչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: Տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին սովորողիների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում: Գնահատումը որոշում է սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների

չափորոշչով սահմանված վերջնարդյունքները, գնահատում ենք գիտելիքները և հմտությունները:

Հետևաբար տարանջատում ենք գնահատման հիմնական հետևյալ սկզբունքները.

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն

Ըստ ուսումնական գործընթացի նպատակի կիրառվում է

-**նախնական գնահատում**՝ բացահայտվում է սովորողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսոցման հետագա գործընթացը

-**ընթացիկ գնահատում**՝ ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը

-**ամփոփիչ գնահատում**՝ ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի առարկայի յուրացման աստիճանը

-**պարտադիր ամփոփիչ** գնահատում՝ ստուգվում են հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնական գործունեության արդյունքները:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որոկավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Գնահատումն իրականացվում է գրավոր և բանավոր: Այն կարող է լինել քանակական (արտահայտվի բալերով, թվանշաններով) կամ որակական: Քանակական և որակական գնահատումը հաճախ զուգակցվում է:

Գնահատման համար կիրառվում են հետևյալ միջոցները կամ գործիքները

- հարցում
- առաջադրանքի կատարում
- հարցարան
- թեստ
- գնահատման սանդղակ
- ուսումնական թղթապանակ
- ստուգատես- ցուցադրություն և այլն

Թեմա 3.
Ընթացիկ գնահատում

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են նաև սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Ընթացիկ գնահատումը հանրակրթության գնահատման համակարգի առաջնային և կարևոր մասն է: Դրա շնորհիվ պարզվում են սովորողների,ուսուցիչների և դպրոցների կողմից պետական,առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և արդյունքները,ուսուցման գործընթացում սովորողների և ուսուցիչների ձեռքբերումներն ու դժվարությունները: Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքն ուղղորդելու,դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման նոր համակարգի համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1.Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի բացահայտումը, նրա ձեռքբերումների ու դժվարությունների արձանագրումը,հաշվառումը և վերլուծությունը ,

2.Կրթակարգով և պետական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների իրականացման բացահայտումը, փուլային ստուգումն ու գնահատումը:

Հանրակրթական դպրոցների սովորողների ընթացիկ գնահատման նպատակներից և սկզբունքներից բխում են հետևյալ առանցքային խնդիրները՝

1. Գնահատման տարբեր ձևերի և տեսակների համակարգված կիրառման միջոցով հնարավորություն տալ սովորողներին առավելագույնս ցուցաբերել իրենց գիտելիքները,կարողությունները և հմտությունները:
2. Գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
3. ՈՒսուցանող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը:
4. Նպաստել սովորողի անձնային որակների ձևավորմանն ու վարքագծի բացահայտմանը խթանել նրա ինքնաճանաչման,ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը:
5. Գնահատման նոր համակարգի ներդրման շնորհիվ բարձրացնել ուսուցիչների պատասխանատվության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

Ընթացիկ գնահատման նոր համակարգի համար ամրագրվում են հետևյալ կարևոր գործառույթները.

1. ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը,խթանել յուրաքանչյուր սովորողի ուսումնական ակտիվությունը,
2. հայտորոշել ուսուցման ընթացքը և արդյունքները,
3. շաղկապել ուսուցումը ուսումնառության հետ,
4. փոխադարձ կապ ապահովել սովորողի,նրա ծնողի հետ, հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը, վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

1.ուսուցանող գնահատում,որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար,ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով կամ մեկնաբանություններով: Ուսուցանող գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցչին պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի, դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու նպատակով: Գնահատման այս ձևի առանձնահատկություններից են հետադարձ կապի առկայությունը, որը տանում է ծագած թերությունները շտկող գործողությունների: Այդ դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ ու փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական նյութի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը և իրենց յուրաքանչյուրի առաջադիմության իրական պատկերը:

Ուսուցանող գնահատման արդյունքների հիման վրա, հետադարձ կապով, ուսուցիչը գնահատում է պետական չափորոշիչների, դասավանդման ծրագրերի և մեթոդների արդյունավետությունը: Ուսուցանող գնահատման դեպքում օգտագործվում են՝ ոչ թե թվանշանային կամ այլ նիշային գնահատումը, այլ աշակերտի առաջընթացը բնութագրող որակումներ և մեկնաբանություններ: Ուսուցանող գնահատման էությունը հնարավոր բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է: Ձևավորող գնահատումն ուսուցանող գնահատման ենթամաս է, որի բնութագիրն ուսումնական նյութը յուրացնելու ընթացքում աշակերտի թույլ տված թերըմբռնումներն ու սխալները հայտաբերելը և դրանք վերացնելն է: Ուսուցանող գնահատման իրականացման նպատակով կարելի է օգտագործել աշխատանքների հետևյալ ձևերը՝

- կարճ ժամանակի համար նախատեսվող առաջադրանք,

- բանավոր հարցում,
- խմբային աշխատանք,համագործակցություն, նախագիծ,
- բաց հարցերով քննարկում,
- ինքնագնահատում,
- գործնական աշխատանք, կիրառություններ,
- ռեֆերատ

Արդունավետ ուսուցման համար կարևոր է աշակերտներին քաջատեղյակ դարձնել ուսուցման նպատակներին, հստակ ներկայացնել դրանց հասնելու քայլերը: Պակաս կարևոր չէ նաև աշակերտի գիտակցությանը հասու դարձնել, որ իր ուսումնական ձեռքբերումների համար ինքն էլ է պատասխանատու: Այդ ամենը կհամարվի հաջողված եթե աշակերտի մոտ առաջանան հետևյալ հարցերը.

- ո՞րն է իմ ուսումնական մոտակա նպատակը ,
- այդ նպատակին հասնելու ճանապարհին ի՞նչ ձեռքբերումներ ունեմ, այդ նպատակն իրականացնելու համար ի՞նչ պետք է անեմ:

2.միավորային գնահատում,որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո՝ 10-միավորային սանդղակով:Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները.

Միավոր	**Անվանում**
10	<<բացառիկ>>
9	<<գերազանց>>
8	<<շատ լավ>>
7	<<լավ>>
6	<<միջինից բարձր>>
5	<<միջին>>
4	<<բավարար>>
3	<<անբավարար>>
2	<<վատ>>
1	<<շատ վատ>>

Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային: Ըստ գնահատման վերաբերյալ ՀՊՉ-ով առաջարկվող փոփոխությունների նախատեսվում է միավորային գնահատման համար 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ թիվ անբավարար գնահատական չի համարվի:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվի: Ընթացիկ գնահատումը կատարվելու է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվելու է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:Միավորային գնահատումը կիրառվելու է սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից: 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնելու է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից:

Մի անգամ մեծ հոգեբան, մակավարժ Դ.Բ. Էլկոնինը մի շատ նպատակային ու դիպուկ արտահայտություն է արել, որը տարածվել է աֆորիզմի նման. «Գնահատականը երեխայի ճակատին ուղղված հրացան է»:

Գնահատումները պետք է լինեն ոչ թե «պատիժ», այլ խթան հանդիսանա սովորողի հետազագործունեության համար:

Այս մոտեցումն ի սկզբանե զրկում է գնահատականը օբյեկտիվությունից: Իսկ անհաջողակները ընդհանրապես ոչ մի մոտիվացիա չեն ստանում: Բողոքելով անփույթ սովորողներից և գնահատման արդյունքում ունեցած վատ պատկերից՝ դասավանդողները լավ կանեն նախ իրենք իրենց հարցնեն՝ ի՞նչ եմ արել երեխային իմ առարկայով հետաքրքրելու համար:

Գնահատման մեր փորձից կարող ենք ասել, որ միավորային գնհատումը ոչ միշտ է օբեկտիվ՝ հատկապես հումանիտար առարկաների տեսանկյունից: Միավորային գնահատումը ստեղծում է ռիսկային մտածելակերպ աշակերտների մոտ: Բոլոր աշակերտների շրջանում 1-6 թվանշանները ասոցացվում են վատ աշխատանքի և հիասթափության հետ, իսկ 7-10 թվանշանները հպարտության և ուրախության հետ: Արդյունքում աշակերտի մոտ գնահատական ստանալու ակնկալիքը ձախողման վախ է առաջացնում: Աշխարհի կրթական համակարգերի հաջողված մոդելների ցանկում է Ֆինական մոդելը, որտեղ չկա միավորային գնահատում և դիրքորոշումներով կրթություն, բայց ամենից արդյունավետն է համարվում:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,

Միավորային գնահատման այս տեսակներից յուրաքանչյուրին անդրադարձել ենք հետազոտական աշխատանքի 2-րդ թեմայի մեջ՝ հայոց պատմություն առարկայի դասավանդման համատեքստում:

Թեմա 4.
Գնահատման գործիքները հայոց պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում

Հայոց պատմություն առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցներում նպատակ ունի սովորողներին ծանոթացնել հայ ժողովրդի հայրենիքի, հայկական արքայական ու իշխանական տոհմերի, պետականության պահպանման համար հայության մղած հերոսական պայքարի, հայ մարդու ստեղծած մշակութային կոթողների հետ: Հետևաբար պետք է գիտակցել հայոց պատմություն առարկայի դասավանդման որակի և նոր սերնդի կողմից դրա յուրացման ու արժևորման կարևորությունը: ՈՒստի ցանկացած մեթոդ, հնար, գնահատման գործիք ու տեսակ պետք է կիրառել այս առարկայից սովորողների առաջընթացն ապահովելու համար:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման շրջանակներում կարելի է կիրառել գնահատման թե՛ ձևավորող, թե՛ ընթացիկ տեսակներն՝ իրենց գործիքներով հանդերձ:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում, սովորողի ուսումնական առաջընթացն ապահովելու նպատակով հաճախ կարելի է կիրառել բանավոր հարցման ձևավորող /ուսուցանող/ գնահատման տարբերակը: Առանձնացրել ենք բանավոր խոսքին ներկայացվող 3 հիմնական պահանջներ՝ բովանդակություն, կառուցվածք և արտահայտման /ներկայացման/ ձև: Սովորողի բանավոր պատասխանին զուգահեռ հնարավոր է ընտրել, թե որ չափանիշը սովորողը ինչ մակարդակով է ապահովում: Դիտարկումների և կատարած նշումների հիման վրա պլանավորվում է արդյունքների բարելավմանն ուղղված հետագա աշխատանքը:

Խոսքի բովանդակությունը	Խոսքը չի համապատասխանում թեմային, արտահայտած մտքերը անհասկանալի են:	Խոսքը կառուցված է թեմայի շուրջ, մտքերը համակարգված չեն, բառապաշարը մասամբ է համապատասխանում թեմային:	Խոսքը համապատասխանում է թեմային, ձևակերպում է ինքնուրույն մտքեր, կիրառում է համապատասխան բառապաշար:	Խոսքը համապատասխանում է թեմային, պարունակում է պատճառահետևանքային կապեր և լրացուցիչ տեղեկատվություն:	Խոսքը համապատասխանում է թեմային, կառուցված է վերլուծությունների և պարզաբանող օրինակների վրա:

Խոսքի կառուցվածքը	Մտքերը կապակցված չեն՝ թռչում է մտքից միտք:	Ասելիքը ներկայացնում է հատվածաբար, առկա են լեզվական սխալներ:	Խոսքը ամբողջական է, գրքային ձևակերպումներով, չկան լեզվական սխալներ:	Խոսքը, գրագետ է, մտքերը ձևակերպում է ինքնուրույն, հակիրճ կամ ընդարձակ:	Խոսքը կուռ է, տրամաբանված, գրագետ, ներկայացնում է պահանջված տարբերակով (ընդարձակ, համառոտ, հարազատ մնալով տեքստին, այլ):
Արտահայտման ձևը	Մտքերն արտահայտում է անվստահ, երկմտելով:	Խոսքը ձգձգված է, կրկնություններով, առկա են անհարկի դադարներ:	Խոսքը սահուն է, առկա են տրամաբանական դադարներ:	Մտքերը հաղորդում է կազմակերպված և արտահայտիչ:	Մտքերն արտահայտում է վստահ, համոզիչ՝ ներկայացնելով սեփական տեսակետը, ապահովելով կապը լսարանի հետ:

Սույն ռուբրիկը նախատեսված է բանավոր հարցման ձևավորող /ուսուցանող/ գնահատման համար, որի արդյունքում միավորային գնահատում չի ենթադրում: Ռուբրիկը ընդհանուր բնույթ ունի և կարելի է կիրառել բոլոր առարկաների շրջանակում:

Բացի բանավոր հարցումից հայոց պատմության դասին կարելի է կիրառել ուսուցանող գնահատման հայտորոշիչ հետևյալ տեսակները.

- Գրավոր աշխաքտանք տանը և դպրոցում
- Տնային աշխատանք
- Ինքնուրույն կատարման ուսումնական առաջադրանք
- Բաց հարցերով քննարկում
- Ինքնագնահատում և փոխադարձ գնահատում
- Խմբային աշխատանք
- Համագործակցային աշխատանք
- Գործնական աշխատանք:

Հայոց պատմություն առարկայի դասավանդան ընթացքում ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու նպատակով կիրառվում է պարտադիր գրանցման ենթակա միավորային /թվանշանային/ գնահատման երեք հիմնական տեսակները.

- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Թեմատիկ գրավոր աշխատանք:

Բանավոր հարցում. Ուսումնական գործընթացում կիրառվում է միավորային գնահատման բանավոր հարցման երկու ձև՝ համառոտ և ծավալուն: Ստուգման այս տեսակի առանձնահատկություններն են ՝

- Տևողությունը՝ համառոտ հարցում՝ մինչև 2 րոպե,ծավալուն հարցում՝ 2 րոպեից ավելի,
- Հաճախությունը՝ մեկ կիսամյակում հայոց պատմություն առարկայի շաբաթական ժամաքանակի կրկնակիից ոչ պաակաս:

Պատմություն
Բանավոր պատասխանի գնահատման ռուբրիկ

Միավորներ/ Չափանիշներ	10	9-8	7-6	5-4	3-1
Նյութի իմացություն	Ցուցաբերում է ուսումնասիրվող նյութի հիմնավոր իմացություն, ներկայացնում է թեմայի մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերը, հասկացություններ ը, երևույթները և գործընթացները	Ցուցաբերում է ուսումնասիրվող նյութի հիմնավոր իմացություն, ներկայացնում է թեմայի մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերը, հասկացությունները, երևույթները և գործընթացները	Ներկայացնում է տվյալ թեմայի բովանդակու-թյան մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների և գործընթացների կեսը	Ներկայացված նյութը մակերեսային է և ոչ հիմնավոր: Ներկայացվել է տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների միայն 1/4-ը	Պատասխանը ամբողջությամբ սխալ կամ էլ ընդհանրապես բացակայում է պատասխանը:

Պատճառահետևանքային կապերի վերհանում, բազմակողմանի վերլուծություն	Բացահայտված է պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառ-հետևանքային կապերը: Պնդումները հիմնավորված են ու փաստարկված: Ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների իմաստն ու էությունը, կատարվել են ճիշտ և հիմնավոր եզրահանգումներ	Բացահայտված է նպատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառա-հետևանքային կապերի 90 տոկոսը-ը, պնդումները հիմնականում հիմնավորված են ու փաստարկված, ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների իմաստն ու էությունը	Հասկացությունները հիմնական ում ճիշտ են մեկնաբանված, սակայն չկան փաստարկներ: Բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառ-հետևանքային կապերի միայն կեսը Պնդումների կեսն է հիմնավորված ու փաստարկված Ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների միայն կեսի իմաստն ու էությունը	Հասկացությունների մեծ մասը կամ մեկնաբանված չէ, կամ մեկնաբանված է սխալ Գրեթե բացակայում են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած պատճառ-հետևանքային կապերը, ներկայացված հարցերը մասամբ են համապատասխանում տվյալ թեմայի բովանդակությանը, կան լուրջ թերություններ և բացթողումներ	
Լրացուցիչ նյութի համադրում և ամփոփում	Ներկայացնում է լրացուցիչ նյութ և համադրում թեմային	Բացակայում է լրացուցիչ նյութը,ներկայացվում է միայն դասգրքայինը	Լրացուցիչ նյութը բացակայում է		
Ստեղծագործա-կան մոտեցում	Ցուցաբերում է ինքնուրույն ստեղծագործական մոտեցում, արտահայտում և հիմնավորում է սեփական տեսակետը	Մասամբ է ցուցաբերում ստեղծագործական մոտեցում, սեփական կարծիքը վստահ չի արտահայտում	Սեփական դիրքորոշում չի արտահայտում	Սեփական դիրքորոշում չի արտահայտում	
Արժևորում	Դրսևորում է գնահատման և արժևորման հմտություն	Մասամբ է դրսևորում գնահատման և արժևորման հմտություն	Չի դրսևորում գնահատման և արժևորման հմտություն	Չի դրսևորում գնահատման և արժևորման հմտություն	

Պատմություն
Բանավոր պատասխանի գնահատման չափանիշներ

Միավորներ	Պատասխանի բովանդակությունը
10 միավոր	Շարադրանք լիարժեք է և ամբողջական: Շարադրանքում՝ • օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերը, հասկացությունները, գործընթացները • հասկացությունները ճիշտ են մեկնաբանված և բերված են մի շարք համոզիչ փաստարկներ • բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառ-հետևանքային կապերը • պնդումները հիմնավորված են ու փաստարկված • ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների իմաստն ու էությունը • կատարվել են ճիշտ և հիմնավոր եզրահանգումներ
9-8 միավոր	• Շարադրանքը հիմնականում ամբողջական է, բայց կան որոշ թերություններ: Շարադրանքում՝ • օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների և գործընթացների 3/4-ը • հասկացությունները հիմնականում ճիշտ են մեկնաբանված և բերված են մեկ-երկու համոզիչ փաստարկներ • բացահայտված է նպատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառա-հետևանքային կապերի 3/4-ը • պնդումները հիմնականում հիմնավորված են ու փաստարկված • ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների 3/4-ի իմաստն ու էությունը • կատարվել են ճիշտ եզրահանգումներ
7-6 միավոր	• Շարադրանքը լիարժեք չէ և ունի էական թերություններ: Շարադրանքում՝ • Օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների և գործընթացների միայն կեսը • Հասկացությունները հիմնական ում ճիշտ են մեկնաբանված, սակայն չկան փաստարկներ • Բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառ-հետևանքային կապերի միայն կեսը • Պնդումների կեսն է հիմնավորված ու փաստարկված • Ճիշտ է ընկալվել պատմական փաստերի և երևույթների միայն կեսի իմաստն ու էությունը • Կատարվել են եզրահանգումներ, սակայն դրանք ոչ միշտ են ճիշտ •

5-4 միավոր	• Շարադրանքը մակերեսային է և ոչ հիմնավոր: Շարադրանքում՝ • Օգտագործվել են տվյալ թեմայի բովանդակության մեջ ընդգրկված պատմական բոլոր փաստերի, հասկացությունների, երևույթների և գործընթացների միայն 1/4-ը • Հասկացությունների մեծ մասը կամ մեկնաբանված չէ, կամ մեկնաբանված է սխալ • Գրեթե բացակայում են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած պատճառ-հետևանքային կապերը • պնդումների 1/4-ն է հիմնավորված ու փաստարկված • ներկայացված հարցերը մասամբ են համապատասխանում տվյալ թեմայի բովանդակությանը, կան լուրջ թերություններ և բացթողումներ • բացակայում են համապատասխան եզրահանգումները
3-1 միավոր	• Պատասխանը ամբողջությամբ սխալ է, առնչություն չունի ուսուցանվող նյութի բովանդակության հետ, կամ էլ ընդհանրապես բացակայում է պատասխանը:

7-րդ դասարանում հայոց պատմություն առարկայից ,,Կիլիկիան Հայաստանի տնտեսությունը և պետական կարգը,, թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել բանավոր հարցման միավորային գնահատման հետևյալ ռուբրիկը.

Նվազագույն մակարդակ /4-5 միավոր/	• Բանավոր խոսքով աշակերտը պետք է ներկայացնի տնտեսության ճյուղերից 1-2-ը • Վերարտադրի ով էր կանգնած Կիլիկիան Հայաստանում պետության գլուխ
Միջին մակարդակ /6-7 միավոր/	• Յուրացրած գիտելիքի միջոցով ներկայացնի Կիլիկիան Հայաստանի պետական կարգը • Տրամաբանության միջոցով վերլուծի Սմբատ Գունդստաբլի կողմից ստեղծված ,,Դատաքստանագրքի,, նշանակությունը:
Առավելագույն մակարդակ /8-9-10 միավոր/	• Լզվամտածողության և տրամաբանության միջոցով կարևորի գործակալությունների դերը երկիրի կառավարման գործում • ՈՒսուցչի հետ համագործակցության միջոցով արժևորի բանակի դերակատարությունը Կիլիկիայի հայկական պետականության կյանքում • Ստեղծագործական մտածողության արդյունքում արդիականացնելով թեման համեմատի և համադրի Կիլիկիան Հայաստանի գործակալությունները ներկայիս ՀՀ-ում գործող նախարարությունների հետ:

Հայոց պատմություն առրարկայի դասավանդման ընթացքում մեկ կիսամյակի ընթացքում պետք է հանձնարարել նվազագույնը մեկ գործնական աշխատանք:

Տարբերակում ենք հայց պատմություն առարկայի համար միավորային գնահատման ենթակա գործնական աշխատանքի հետևյալ տեսակները.

- Աշխատանք սկզբնաղբյուրների հետ
- Գծակարգերի կազմում
- Աշխատանք ուրվագծային քարտեզների հետ:

Մեր աշխատանքում կանդրադառնանք գործնական աշխատանքի ,,Գծակարգերի կազմում,, տարբերակին: Օրինակ 8-րդ դասարանում հայոց պատմություն առարկայից ,, Ազատագրական խմբակները և կազմակերպությունները,, և ,,Հայ ազգային կուսակցությունները,, թեմաները ուսումնասիրելուց հետո կարելի է հանձնարարել հետևյալ գծակարգով գործնական աշխատանքը.

Առաջադրանք 1.Լրացնել ,, Ազատագրական խմբակները և կազմակերպությունները,, և ,,Հայ ազգային կուսակցությունները,, աղյուսակը /10 միավոր/.

N	Ազատագրական խմբակը, Կուսակցությունը /քայլը՝0.25 միավոր/	Տարեթիվը /քայլը՝0,25 միավոր/	Գործչի անունը /քայլը՝0.25 միավոր/	Վայրը /քայլը՝0.25 միավոր/
1	<<Պաշտպան հայրենյաց>>	1881թ.	Խաչատուր Կերեքցյան	Կարին
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				

Գործնական աշխատանքի տրված օրինակի գնահատման ռուբրիկ

10 միավոր		
	Քանակը	Քայլը
Ազատագրական խմբակը, Կուսակցությունը	10	0,25 միավոր
Տարեթիվը	10	0,25 միավոր
Գործչի անունը	10	0,25 միավոր
Վայրը	10	0,25 միավոր

Թեմատիկ աշխատանք.Յուրաքանչյուր թեմայից սովորողների ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսվում է ծավալուն գրավոր աշխատանք: Այն պետք է կազմվաքծ լինի տվյալ թեմայից սովորողներին ներկայացվող առարկայական չափորոշչային պահնջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից: Ընթացիկ գնահատման այս տեսակի հիմնական առանձնահատկություններն են՝

- Տևողությունը՝ մինչև 45 րոպե
- Առաջադրանքների բնույթը՝ փաստերի իմացություն, գիտելիքներ կիրառում, տրամաբանական եզրահանգում, վերլուծություն , համեմատություն, ստեղծագործական մտածողություն:

Օրինակ 9-րդ դասարանում հայոց պատմություն առարկայի ,,Խորհրդային Հայաստանը և հայկական սփյուռքը 1945-1991 թթ.,, բաժինն ուսումնասիրելուց հետո կարելի է հանձնարարել նմանատիպ թեմատիկ աշխատանք.

Հայոց պատմություն

/9-րդ դասարան/

Թեմատիկ աշխատանք

1.Ե՞րբ գործարկվեց Հաէկ-ի առաջին էներգաբլոկը: / 0,5 մ./

ա.1976թ. բ.1945թ. գ.1988 դ. 1990

2.Ինչպե՞ս կոչվեցին Նիկիտա Խրուշչովի կառավարման տարիները: /0,5 մ./

ա.Ձնհալի բ.Լճացման գ.Վերակառուցման դ.Ամբողջատիրական

3. Ո՞ր երկիրը առաջինը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: /0,5 մ./

ա.Հունաստան բ.Կիպրոս գ.Ուրուգվայ դ.Ֆրանսիա

4.Ե՞րբ սկսվեց Արցախյան շարժումը:/0,5 մ./

ա.1990 թ. ապրիլի 11 բ.1988 թ. փետրվարի 20 գ. 1990 օգոստոսի 23 դ.1988 մարտի 1

5. Ե՞րբ ստեղծվեց <<Ղարաբաղ կոմիտեն>>, ովքեր էին ղեկավարները:/1 մ./

_____

6. Ե՞րբ տեղի ունեցան Սումգայիթի ջարդերը և քանի հայ սպանվեց:/1 մ./

_____

7. Կատարել համապատասխանեցում:/1 մ./

1.Միխայիլ Գորբաչով ա.1964-1982 թթ.

2.Նիկիտա Խրուշչով բ.1922-1953 թթ.

3. Լեոնիդ Բրեժնև գ.1985-1991 թթ.

4. Իոսիֆ Ստալին դ.1953-1964 թթ.

1	2	3	4

8.Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:/1 մ./

ա.<<Օղակ>> օպերացիայի իրականացումը

բ.Հայոց ցեղասպանության դատապարտումը Եվրախորհրդարանում

գ.Արփա-Սևան ջրատարի կառուցման ավարտը

դ. Բաքվի հայերի ջարդերը

ե. Սպիտակի երկրաշարժը

1	2	3	4	5

9.Կատարել համապատասխանեցում:/1 մ./

1.1946 թ. հոկտեմբերին հայրենադարձվածներ ա. 90.000 հայ

2.1946-1948 թթ. հայրենադարձվածներ բ. 51.000 հայ

3.1950-ական թթ. հայրենադարձվածներ գ. 32.000 հայ

4. 1962-1982 թթ. հայրենադարձվածներ դ. 4000 հայ

1	2	3	4

10.Ներկակյացնել Արցախյան շարժման սկիզբն ու ծավալումը: /3 մ./

_____

_____

_____

Թեմատիկ աշխատանքի տրված օրինակի գնահատման ռուբրիկ

10 միավոր	
Առաջադրանք	Միավոր
1-4 առաջադրանքներ	Յուրաքանչյուրը 0,5 միավոր
5-6 առաջադրանքներ	Յուրաքաչյուրը 1 միավոր
7-9 առաջադրանքներ	Յուրաքաչյուրը 1միավոր / քայլի սխալի պարագայում առաջադրանքին միավոր չտալ/
10 առաջադրանք	3 միավոր

Միավորային գնահատման վերևում երաշխավորված տեսակների կիրառումից առաջանում են ինչպես հանրակրթական մյուս առարկաների պարագայում, այնպես էլ հայոց պատմություն առարկայից սովորողների առաջադիմության ցուցանիշները:

Եզրակացություն

Այսօր ուսուցիչներիս համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել: Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում:Այսօր իրավիճակը փոխվել է: Մեզ արդեն մատչելի են նոր տեխնոլոգիաները, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրները, սակայն տեղեկատվության այս բազմազանությունն էլ իր հերթին խնդիրներ է առաջ բերում: Նոր նպատակները փոփոխություններ են բերել նաև կրթության բովանդակության մեջ: Զարգացնելով նորը, առաջ քաշվեց նաև ուսուցման, ստուգման ու գնահատման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ուսուցիչները ակտիվ մասնակցում են այս գործընթացին, անցկացվում են վերապատրաստումներ՝ մասնագիտական զարգացման համակարգի շրջանակներում, ներդրվում են նոր մեթոդներ ու տեղեկատվության հետ աշխատելու, նոր տեխնոլոգիաներից օգտվելու կարողություն: Եվ այս ամենը կնպաստի ավելի որակյալ կրթության: Այս ամենի հետ շատ կարևոր տեղ ունի գնահատումը: Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում, որպես սկզբունք, նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա կենտրոնանալը՝ ի օգուտ ուսուցանող աշխատանքների, գործնական աշխատանքների ու գիտելիքների կիրառությունների: Հետադարձ կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները և արվում հետևություններ: Այս ամենով, մենք՝ ուսուցիչներս արժևորում, դատողություններ ենք անում աշակերտի արածի և ձեռք բերածի արժեքային համակարգի մասին: Մեկ ուսումնական տարի հետո կդրվի նոր գնահատման գործընթացը, որը իրենից ներկայացնում է ոչ միավորային գնահատում:

Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնաիրացմանը: Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ: Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:

Գրականություն

1. https://kznakgnahatum.blogspot.com/2023/03/blog-post_24.html?m=1
2. https://drive.google.com/file/d/1HncFQ1MpNnM9H2bPulP69DaZWPZpUJCY/view
3. Միրաբյան Լուսիկ, Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակները և ձևերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում, Երևան, 2014 :
4. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html?m=1
5. https://krtahartak.am/courses/obligatory/course-013/lessons/%D5%A4%D5%A1%D5%BD-1-19/
6. https://lib.armedu.am/article/1140
7. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Պատմություն և հասարակագիտություն, Երևան, 2009:

Հավելված

5 քայլով դասի պլան

Առարկա՝ Հայոց պատմություն
Դասարան՝ 7
Դասի թեմա՝ Կիլիկիայի հայկական պետության տնտեսությունը և պետական կարգը
Ուսուցիչ՝ Տոնոյան Անի
Դասի նպատակը
Նպաստել Կիլիկյան Հայաստանի տնտեսության ճյուղերի, գործակալությունների և դրանց գործառույթների, բանակի և համապետական օրենսդրության մասին գիտելիքների ձեռք բերմանը:
Անհրաժեշտ նյութեր – պաստառ, դասագիրք, աշխատանքային տետր, քարտեր, ատլաս

Դասի ավարտին սովորողը կիմանա՝

- Կիլիկիան Հայաստանի տնտեսության ճյուղերը,
- Պետական կառավարման համակարգը
- Կիլիկիան Հայաստանի օրենսդրության մասին

կկարողանա՝

- Տարանջատել տնտեսության ճյուղերը,
- թվարկել Կիլիկիայի նշանավոր քաղաքները
- բացատրել արտաքին առևտրի զարգացման հնարավորությունները
- համեմատել որոշ պաշտոնյաների գործառույթները
- արժևորել համապետական օրենսդրությունը՝ հայկական պետականության ամրապնդման գործում:

<u>1 Դասի սկիզբ</u>

Հարցերով ամփոփվեց Կիլիկիան Հայաստանը 13-ից 14-րդ դարերում թեման, կատարվեց անհատական հարցում և համառոտ շարադրանքի միջոցով ներկայացվեց դասանյութի առանցքային խնդիրները՝ Կիլիկիան Հայկական թագավորության կարևոր փաստերը, իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը, Կիլիկիայի հայոց պետության տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ:

<u>2 Նոր նյութի հաղորդում</u>

Պաստառի կիրառմամբ, խոսքային մեթոդով ներկայացվեց Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը, պետական կարգը, գծապատկերով տարանջաատվեց իշխանական և թագավորական ժամանակաշրջանի կառավարման համակարգի տարբերությունները, ընդգծվեց բանակի դերակատարությունը, պետականության անվտանգության պահպանման գործում:

3 Ուղղորդված աշխատանք

Պաստառի օգնությամբ տարանջատել և համեմատել իշխանական և արքայական ժամանակաշրջանների պետական կառավարման համակարգը, առանձնացնել և հիմնավորել գործակալությունների դերակատարությունը արքունի տարբեր ոլորտների կառավարման գործում և արդիականացնել գործող կառավարության և նախարարությունների հետ /օր.՝ սպարապետ-պաշտպանության նախարար /:

4 Ինքնուրույն աշխատանք

Թեստային առաջադրանք

1. Որո՞նք Կիլիկիան Հայաստանի քաղաքներից չեն:

ա. Սիս բ. Դվին գ. Ադանա դ. Անի ե. Տարսոն զ. Արծն

2. Կիլիկիան Հայաստանի արքունիքի մեջ նշվածներից ո՞ր մարմինը չէր մտնում:

ա.բարձրագույն դատական ատյան բ.արքունի խորհուրդ գ.գործակալություններ դ.արքունի քարտուղարություն

3. Ո՞ր գործակալությունն էր բացակայում իշխանական ժամանակաշրջանում:

ա. սպարապետություն բ. խնամակալություն գ. թագադիր ասպետություն

դ. մարաջախտություն

4. Որքա՞ն էր Կիլիկիան Հայաստանի բանակի թվակազմը պատերազմի ժամանակ:

ա. 80-100 հազար բ. 40-80 հազար գ. 80-120 հազար դ. 80-110 հազար

5. Ո՞վ է կազմել Կիլիկյան Հայաստանի համապետական օրենսդրությունը՝ <<Դատաստանագիրքը>>:

ա. Սմբատ Գունդստաբլ բ. Հեթում 1-ին գ. Լևոն Մեծագործ դ. Օշին արքա

5 Դասի ավարտը

Դասը ամփոփելու և ամրապնդելու նպատակով անցնել ներկայիս գործող կառավարության կայքէջը / https://www.gov.am/am/gov-members/ / և 3 րոպե տևողությամբ ծանոթանալ նախարարությունների ու նախարարների հետ՝ զուգահեռներ տանելով Կիլիկիան Հայաստանի արքունիքի և գործակալությունների հետ՝ ընդգծելով դրանց գործառույթների նմանությունները և տարբերությունները:

Գնահատում – միավորային ըստ կազմած սանդղակի.

1. Իմանա տնտեսության ճյուղերը 2. Ո՞վ է կանգնած Կիլիկիան Հայաստանում պետության գլուխ 3. Ատլասի վրա ցույց տա արքայական քաղաքներից երկուսը	4-5 միավոր	Նվազագույն մակարդակ
1. Ներկայացնի Կիլիկիան Հայաստանի պետական կարգը 2. Վերլուծի Սմբատ Գունդստաբլի կողմից ստեղծված <<Դատաստանագրքի >> նշանակությունը	6-7 միավոր	Միջին մակարդակ
1. Առանձնացնել արքունիքի կարգավիճակը մինչև 1198 թ. և դրանից հետո 2. Կարևորի գործակալությունների դերը երկրի կառավարման գործում 3. Առանձնացնի և արժևորի բանակի դերակատարությունը Կիլիկիայի հայկական պետականության կյանքում	8-10 միավոր	Առավելագույն մակարդակ

Տնային առաջադրանք- պատմել դասը, համացանցից դուրս բերել կարևոր նյութեր Կիլիկիայի հայկական պետության տնտեսության և պետական կարգի վերաբերյալ:

https://www.wikiwand.com/hy/%D4%BF%D5%AB%D5%AC%D5%AB%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3